№ 48 Մարտի 22 (Ապրիլի 3) 1880 Մարտի 22 (Ապրիլի 3) № 48

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդ ենք սպասում։—Ներքին տեսութիւն։ Քանի մի խօսք էժան կրեդիտի մասին։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Ելիսաւետպոլից։ Նամակ Երևանից։ Նամակ Գանձակից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Պարսկաստան։ Ռուսաստանի և Չինաստանի յարաբերութիւնները։—«Մշակի» հեռագիրներ։— Յայտարարութիւններ։

ԱՅԴ ԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ

Շատերին ճանճրալի է թվում, որ մենք տպում ենք «Մշակի» մէջ Վանի սովելոց համար նուիրատուութիւնների բոլոր ցուցակները նուիրատու բոլոր անձանց անուններով ու ազգանուններով, իրանց նուիրած գումարներով, լինի այդ գումարը 100 ռուբլ, թէ 2 կոպէկ։

Բայց, որքան էլ այդ ճանճրալի երևար ընթերցողների համար, մենք անհրաժեշտ ենք համարում այդ տեսակ ճիշդ հաշիւ տալ հասարակութեանը մեր ստացած փողերի մասին։ Այժմեան դարում ամեն բանի մէջ պէտք է լինի ճիշդ հաշիւ և կօնտրոլ։ Թող, երբ նուիրատուութիւնները վերջանան, հասարակութիւնը միջոց ունենայ վերաստուգել մեր տուած հաշիւների ճշդութիւնը, համեմատելով մեր ուղարկած փողի գումարը մեր ստացած գումարների հետ։

Միայն նա իրաւունք ունի պահանջել ուրիշից ճիշդ հաշուապահութիւն, ով որ ինքն ճշդութեամբ պահում է հասարակական գումարների հաշիւները։

Այդ պատճառով մենք մեզ թոյլ ենք տալիս յուսալ որ և Կ. Պոլսի սովելոց խնամող մասնաժողովը նոյնքան ճիշդ հաշիւ կը տայ Ռուսաստանի հայ հասարակութեանը իր ստացած փողերի գործադրութեան մասին։

Նոյնը մենք յոյս ունենք, կանի Էջմիածինը, որ այժմ ձեռք է տուել Թիւրքիայի հայ սովելոց համար փողերի հանգանակութեան։ Մենք սպասում ենք Էջմիածնից, որ նա էլ կը տպագրի իր «Արարատ» ամսագրի մէջ կոպէկ առ կոպէկ յօդուտ սովելոց իր բոլոր հաւաքած գումարները, մեզ պէս տպագրելով և բոլոր նուիրատուների ազգանունները։

Իսկ եթէ Էջմիածնի համար դա անհնարին է անել «Արարատի» մէջ, մանաւանդ որ այդ պարբերական հրատարակութիւնը միայն ամիսը մի անգամ է հրատարակվում և շատ անգամ ուշանում էլ է,—մենք պատրաստ ենք, ընդհանրութեան օգուտը և գործի անյետաձգութիւնը աչքի առաջն ունելով, առաջարկել Էջմիածնին տպագրել «Մշակի» էջերում հոգևորականներից հաւաքած բոլոր նուէրների ցուցակները, ուրախութեամբ պատրաստ ենք յանձն առնել նոյն իսկ հոգևորականների ձեռքով հաւաքած գումարներն էլ ընդունել և հասցնել ուր հարկն է։

Սպասում ենք Էջմիածնից մեր արած առաջարկութեան պատասխանի։

Հաւատացած ենք որ այդ պատասխանի «Մշակի» խմբագրութեան հետ միասին սպասում է և Ռուսաստանի հայոց հասարակութեան մեծ մասը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ ԷԺԱՆ ԿՐԵԴԻՏԻ ՄԱՍԻՆ

«Մշակի» վերջին համարներից մինի մէջ Երևանից հաղորդվեցաւ այն լուրը, որ մի պարոն, Մինասեանց անունով վէկսէլների մի դրասնեակ է հիմնել Նորերուքիս Երևանի մէջ։ Նամակագիրը սաստիկ համակրութեամբ է խօսում այդ նոր հիմնարկութեան մասին և աջողութիւն է ցանկանում պ. Մինասեանցի գործին։ Մանաւանդ թղթակիցը նրանով է հիացած, որ միջին և փոքր կարողութեան տէր մարդիկ, ինչպէս ծառայողները և արհեստաւորները, կարող են պ. Մինասեանցի բիւրօյից իրանց փոխ առած գումարները յետադարձութեամբ վճարել, այսինքն հատուցանել ամսական կամ շաբաթական վճարներով։

Մենք շատ հեռու ենք մեր պատուելի թղթակցի ուրախութիւնը բաժանելուց պ. Մինասեանցի հիմնարկութեան պատճառով։ Այդ տեսակ հիմնարկութիւնները, ինչպէս մասնաւոր անձանց փոխատու բիւրօները, կարող են ժողովրդի անտեսական բարօրութեան համար երկայրի զէնքեր լինել։ Եթէ գործը խղճմտանքով տարվի, պ. Մինասեանի գրասենեակը կարող է մեծ օգուտներ տալ ժողովրդին, բայց ուրիշ կողմից այդ էժան և հեշտ վճարելի փոխատուութեան ձևը կարող է և զայթակղութեան պատճառ դառնալ միջին և մանր կարողութեան տէր մարդիկներին։ Էժան կրեդիտ ձեռքի տակ ունելով, չափաւոր կարողութեան տէր մարդը, կամ աշխատասէր արհեստաւորը կարող են այն աստիճան զբաղվել այդ կրեդիտով, որ կուգենան իրանց կարողութենից վեր կրեդիտից օգուտ քաղել, վերջը կը մտնեն այնպիսի պարտքերի տակ, որ այլ ևս երբէք չեն կարողանայ այդ պարտքերից ազատվելու։

Եւ երկու դիպուածումն էլ, վերջ ի վերջոյ, զուտ շահը կը ստանայ բիւրօյի տերը, իսկ փոխառութիւն անողը միշտ աղքատ կը մնայ....

Աւելի լաւ չէ՞ր լինի այնպէս անել, որ շահը դարձեալ մնար կրեդիտից օգուտ քաղողներին։ Այդ բանին շատ հեշտ է հասնել. փոխանակ մի մասնաւոր անձն շահվի, թող շահվի կրեդիտին կարօտ անդամների ամբողջ ընկերութիւնը։ Փոխանակ մասնաւոր անձի բիւրօյից օգուտ քաղել, կարելի էր հիմնել մի փոխատու—խնայողական ընկերութիւն։

Այդտեղ կրեդիտի մէջ պահանջ ունեցող անձինք մի կողմից նոյնքան էժան գնով կարող էին դրամ փոխ առնել, իսկ միւս կողմից հիմնարկութեան ամբողջ գործունէութեան (օպէրացիայի) շահը կը մնար ոչ թէ մի մասնաւոր անձին, այլ կը պատկանէր այդ հիմնարկութեան անդամների ամբողջ ընկերութեանը։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

12 մարտի

Փետրվարի 14-ին Վանայ սովալուկների համար խմբագրութեանդ ուղարկված 371 ռուբլուից յետոյ կրկին իմ ընկերների՝ Օ. Մութաֆեանցի և Ս. Յարօյեանցի հետ հաւաքեցինք նոյն նպատակի համար եօթանասուն և ութը (78) ռուբլ, որը այժմ ձեզ ուղարկելով, խնդրում եմ հասցնել ուր հարկն է և տպագրել ձեր պատուական թերթի մէջ պատուելի նուիրատուաց անունները։

Իսահակ Մելիք-Հայկազեան 50 ռուբլ, Արսէն Լօմիձէ 4 ռ., Подполк. Прокоповичъ 3 ռ. Майсурадзе 1 ռ., Թադուհի Այվազեանց 5 ռ., Նիկտարինէ Զիլինկարեանց 1 ռ., Մկրտիչ քահանայ Թամոյեանց 3 ռ., Յարութիւն Շիրինեանց 1 ռ., Հ. Մանանտեանց 1 ռ., Դ. Սաղոյեանց 1 ռ., Յ. Գեղամեանց 5 ռ., Վ. Հէրմիւզեանց 2 ռ., Մ. Ալիխանեանց 1 ռ։ Ընդամենը 78 ռուբլ։

Գ. Զաթալբաչեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼԲԱԼԱԲԻՑ

Մարտի 8-ին

Մի քանի երիտասարդներ, չրջելով Ախալքալաքում տնէ 'ի տուն, հաւաքեցին յօգուտ Վանայ և Ալաշկերտի սովելոց 416 ռ. 75 կ։ Բացի սորանից նոյն նպատակով հաւաքվեցաւ պ. Ց. Վահրամեանի տան մէջ 19 ռ.։ Ընդամենը 507 ռ. 75 կ.։ Ուղարկելով ձեզ, պ. խմբագիր, այդ գումարը խնդրեմ ուղարկել ուր հարկն է և տպագրել «Մշակ» մէջ հետեւեալ նուիրատուների ցուցակը։

Պ. Ց. Վահրամեանի տանը բոլոր ստորագրվողները կամեցան մնալ անյայտ և բոլորեքեան ստորագրեցին «Հայ ոմն»։ Իսկ տնէ 'ի տուն չրջելով, եղան հետեւեալ նուիրատուութիւններ՝ Անյայտ ոմն 3 ռ., Սարգիս Ղազանչեանց 10 ռ., Յովակիմ Յովհանչանեանց 15 ռ., Սրբուհի Երեցփոխեանց 20 ռ., Պիճիկեանց 10 ռ., Տէր-Կիրակոսեանց 10 ռ., Յարութիւն Դիաթեանց 2 ռ.. Տիգրան Թումանեանց 1 ռ., Բաղդասար Այվազեանց 2 ռ., Սոֆիա Ղարայանեանց 5 ռ., Յակովբ Դարբինեանց 10 ռ., Արէքնազան Վարդանեանց 25 ռ., Աւետիս Մկրտչեան 3 ռ., Աղէքսանդր Աւետիքեանց 3 ռ., Աննա Հաղարապետեանց 10 ռ., Եղբայրք Մաղաքեանք 5 ռ., Դաւիթ Գանանեանց 12 ռ., Սարգիս Վարդանեան Յարութիւնեանց 20 ռ., Յովսէփ Շահ-Պարոնեանց 1 ռ., Գասպար Շահ-Պարոնեանց 5 ռ., Գայանէ Շահ-Պարոնեանց 5 ռ., Յովհաննէս Վահրամեանց 5 ռ., Մեսրոպ Պիճիկեանց 5 ռ., Մատթէոս Մութաֆեանց 2 ռ., Ստեփան Կարապետեանց 2 ռ., Թամամչեանց 5 ռ., Խաչատուր Գէորգեան 1 ռ., Հայ ոմն 1 ռ., Ոմն 6 ռ., Գրիգոր Բարսեղեան 1 ռ., Մկրտիչ Մահտեսի Պապինեան 3 ռ., Գրիգոր Սարայտարեան 1 ռ. 50 կ., Գրիգոր Բաղդասարեանց 2 ռ., Ղորխմազ Լորիս-Մելիքեան 2 ռ., Խաչատուր Սօմնճեանց 3 ռ., Մարգար Կարապետեան 3 ռ., Առաքել Եաղուբեան 3 ռ., Մինաս Շահ-Պարոնեան 1 ռ., Աղանիկ, Շուշրչեան 3 ռ., Յարութիւն Իսկանդարեան 1 ռ., Մեսրոպ Աբաճեան 1 ռ., Յամբարձում Կրանիկով 25 կ., Յովհաննէս Սուքիասեան 1 ռ., Յաջիբաբ Բարսղեանց 2 ռ., Մելքոն Յակովբեան 2 ռ., Սիմէօն Մութաֆեանց 50 կ., Աղաջան Աւագեան 1 ռ., Աղէքսանդր Զարիչեանց 1 ռ., Յովսէփ Նալբանդեանց 3 ռ., Պապիկ Աթոնեանց 2 ռ., Յովհաննէս Մելիքեանց 1 ռ., Աբրահամ Մարաչլեանց 2 ռ., Վարդան Մարգարեանց 1 ռ., Յաջի-Գուլօ Բաղիա-չվիլի 50 կ., Պողոս Մառանջեանց 10 ռ., Փիլիպպոս Միրաքեանց և Սարգիս Ինջիկեանց 10 ռ., Վարդան Տէր-Վարդանեան 3 ռ., Մկրտիչ Մատոյեանց 10 ռ.. Յովհաննէս Աւագանեանց 5 ռ., Նաղարէթ Կարապետեան 50 կ., Յակովբ Մարգարեանց 3 ռ., Արագօվայ բնակիչ Հայրապետ Աղապալեանց 20 ռ., Արագօվայի Կարապետ քահանայ Դաւթեան 3 ռ., Խաչատուր Գրիգորեանց 25 ռ., Յարութիւն Փէշտմալջեանց 6 ռ. Մելքոն Յակովբեան 5 ռ., Յարութիւն Աղասիկեանց 5 ռ., Աղանիկ Զրպետեանց 1 ռ., Սիմէօն Մինասեան 1 ռ., Սարգիս Յարութիւնեան 3 ռ., Աղալար Եղիազարեան 1 ռ., Յակովբ Պիճիկեանց 10 ռ., Կարապետ Յովհաննոզլեանց 1 ռ., Մեսրոպ Թուրոյեանց 1 ռ., Խաչատուր Զլնկարեանց 50 կ., Գրիգոր Ղուկասեանց 1 ռ., Աւետիք Տէր-Թորոսեան 1 ռ.. Դիոնեսիոս Քաջազունի 6 ռ., Սարգիս Պապոյեանց 1 ռ., Նիկողայոս Մատոյեանց 3 ռ., Կարապետ Մինասեանց 2 ռ., Խաչատուր Նալբանդեանց 1 ռ., Բաղդասար Ինջիկեանց 3 ռ., Դաւիթ Աւետիսեանց 1 ռ., Սարգիս Գրիգորեան 3 ռ., Տիգրան Ստեփոյեանց 3 ռ., Յակովբ Թէոսով 1 ռ., Մկրտիչ Ստեփոյեանց 1 ռ., Յակովբ Զոմաեանց 1 ռ., Գէորգ Մեծատունեանց 1 ռ. Կարապետ Մեծատունեանց 1 ռ., Կոնստանդին Նալբանդեանց 1 ռ., Յարութիւն Յովհաննէսեան 2 ռ., Միխայէլ Մուրվանով 3 ռ., Մկրտիչ Մելիքեանց 1 ռ., Ստեփան Մուշեղեանց 1 ռ., Պետրոս Նալբանդեանց 3 ռ., Գրիգոր Փէշտմալջեանց 1 ռ.։ Մի քանի երիտասարդներից Տօնական Ղազանչեանցի ձեռամբ 4 ռ., Ստեփան Ռբովեանց 1 ռ.։

Այս նուիրատուութիւններ ժողովող երիտասարդները պարտք են համարում հրապարակաւ առանձին շնորհակալութիւն յայտնել այն անձանց, որոնք մասնակցեցին ստորագրութեան, նամանաւանդ ստորագրվող մեծապատիւ տիկնանց, որոնք միշտ համակրել են և համակրում են ազգօգուտ գործերին, ինչպէս և երևում է նուիրատուների ցուցակից։ Ստորագրութիւնը չարունակվում է։

Ա. Աղահվերդեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 11-ին

Հեռագրով խնդրում եմ տեղոյս վաճառական պ. Յովակիմ Գէորգեանից, որ այժմ Թիֆլիսումն է, յանձնել ձեզ 409 ռուբլ։

Այդ գումարը նուիրեցին յօգուտ սովատանջ վանեցւոց հետևեալ անձինքը. Յովհաննէս Ղորդանեան 30 բուբլ, Ղևոնդ Ղազարեան 20 ր., Վարդան Եղիազարեան 15 ր., Համբարձում Եղիազարեան 15 ր., Պօղոս Ալթունեան 15 ր., Զաքար և Յակոբջան Գէորգեանք 25 ր., Նիկողայոս Քալանթարեան 11 ր., Ներսէս Աթաբեկեան 11 ր., Վասիլ Եղիազարեան 10 ր., Յովհաննէս Մարգարեան 10 ր., Յովհաննէս Անանեան 10 ր., Նահապետ Մելիքեան 10 ր., Տիգրան Ափրիկեան 10 ր., Սողոմոն Մելիքեան 10 ր., Աղամալ Մելիք Աղամալեանց 10 ր., Ռուբէն և Անտուանէտայ Զալալեանք 10 ր., Գաբրիէլ Տէր-Պետրոսեան 8 ր. 50 կ., Ստեփան Եղիազարեան 8 ր., Աղաջան Ազիզեան 8 ր., Ենովք Ղորդանեան 6 ր., Աւետիք Երզնկեան 6 ր., Աղաջան Եղիազարեան 6 ր., Ստեփան Մուսաբեկեան 5 ր., Կասպար Կասպարեան 5 ր., Յարութիւն Ամիրեան 5 ր., Մարտիրոս Քալանթարեան 5 ր., Յովհաննէս Թադէոսեան 5 ր., Սպիրիտոն Մելիք-Աղամալեան 5 ր., Եգօր Բակլաչով 5 ր., Աղէքսանդրօպոլցի Արշակ Վարդապարիկեանց 5 ր., Միքայէլ Վանեցեան 5 ր., Սարգիս Տէր-Գրիգորեան 5 ր., Նիկողայոս Գեօկչայեան 5 ր., Յարութիւն Այտինեան 5 ր., Աղէքսանդր Մելիք-Աղամալեանց 5 ր., Յովսէփ Տէր-Յովսէփեան 4 ր., Վլասիոս Յովհաննէսեան 3 ր., Խաչատուր Թադէոսեան 3 ր., Աբգար Դաղեան 3 ր., Ֆարամազ Մելիք Ալլահվերդեան 3 ր., Սամսոն Տէր-Իսահակեան 3 ր., Միքայէլ Տէր-Միքայէլեան 3 ր., Տրդատ Վարդանեան 3 ր., Մկրտիչ Խուդաբաչեան 3 ր., Կոնստանտի Առաքելեան 3 ր., Վասիլ Թադեանոսեան 3 ր., Աղէքսանդր Յովնանեան 3 ր., Գէորգ Յովհաննէսեան 3 ր., Կոնստանտին Եուզբաչեան 3 ր., Պռօշ Պռօշեան 3 ր., Աշոտ Յովհաննէսեան 3 ր., Նախիջևանցի Բողտան Խուդավերդեան 3 ր., Նախիջևանցի Անտոն Թունեան 3 ր., Մկրտիչ Թադէոսեան 2 ր., Յակովբ Յովհաննէսեան 2 ր., Կարապետ Դաղամեան 2 ր., Տիգրան Տէր-Յակովբեան 2 ր., Ստեփան Տէր-Յակովբեան 2 ր., Յովհաննէս Տէր-Զաքարեան 2 ր., Գրիգոր Ռեվազեան 2 ր., Հայրապետ Թադեանոսեան 2 ր., Մկրտիչ 1 ր., Աւետիք Այոյեան 1 ր., Սիմէօն Քալանթարեան 1 ր., Մկրտիչ Միանսարեան 1 ր., Միքայէլ Միանսարեան 1 ր., Խեչումեան 1 ր., Յովսէփ Տէր-Մարուգեան 1 ր., Սարգիս Սարգիսբեկեան 1 ր., Աբգար Գիւլամիրեան 1 ր.։ Ընդամենը 409 ր. 50 կ.։ 50 կ. վճարած է հեռագրի ծախս։ Սորագրութիւնը շարունակում են զանազան անձինք։

Վասիլ Եղիազարեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մարտի 1

Երբ որ պ. Պռօշեանցը տեռ. նոր էր նշանակվել թեմական տեսչի օգնական, «Մշակի» խմբագրութիւնը Երևանի իր թղթակիցներից մէկի ուշադրութիւնը դարձրեց պարոնի ապագայ գործունէութեան վրա։

Պարոն թղթակիցը մինչև այսօր լուռ է. թղթակցի այդ լռութիւնը առիթ է տալիս ինձ մի ակնարկ ձգել պ. Պռօշեանցի գործունէութեան վրա։

Թեմական տեսուչը երկու պարտականութիւն, կարծեմ, պէտք է ունենայ. առաջինը՝ հսկել իրեն յանձնած ուսումնարանների տնտեսական կողմի վրա և երկրորդ՝ բարւոքել այդ ուսումնարանների ուսումնական մասը։ Ուսումնարանների տնտեսական կողմի վրա հսկել ասելով, մենք ուզում ենք հասկացնել, որ թեմական տեսուչը, տարին գոնէ մի անգամ այցելելով իր ուսումնարաններին, պէտք աշխատի նրանց նիւթական դրութիւնը բարձրացնել, ժողովրդից նուէրներ հաւաքելով և այդպիսով ուսումնարանների ապագայ գոյութիւնը պահպանել։

Մինչև այժմ թէ մեր հոգևոր ուսումնարանները և թէ ծխական դպրոցները իրանց ուղղութեամբ ու ծրագրերով ամենևին նմանում չեն միմեանց։ Աշակերտը մի դպրոցից մի այլ դպրոց փոխադրվելիս, առանց ժամանակի կորստի չէ կարողանում իր ուսումը շարունակել։ Այդ դէպքում պ. թեմական տեսուչը պարտաւոր է, մեր կարծիքով, կազմել մի ընդհանուր ծրագիր ծխական դպրոցների ու հոգևոր դպրոցների համար. ծրագիրը պատրաստ լինելուց յետոյ, նա պէտք է կազմի պլաններ ու որոշի ժամանակ հաւաքել մի տեղ պ. պ. ուսուցիչներին քննելու այդ ծրագիրը և ներկայացնել հաստատութեան համար։ Այդ հանդամանքները ի նկատի ունենալով, պէտք է խոստովանվել, որ թեմական տեսուչը պէտք է լինի հմուտ մանկավարժութեան մէջ։

Պ. Պռօշեանցը տեսուչ նշանակված օրից մինչև այժմ Երևանումն է և, որքան մեզ յայտնի է, քաղաքից դուրս չէ գնացած։ Նա բաւականանում է բարեկամներին, իր հին ծանօթներին այցելութիւն գնալով, միութարել նրանց և ուրախ ժամեր անցնել նրանց հետ։

Հին-Նախիջևանից գրում են «Մշակին», որ պ. տեսուչը երևի ուզում է մի լաւ էլ բարեկենդան կատարել և յետոյ այնտեղի ուսումնարանին տեսութիւն գնալ։

Բայց մենք ասում ենք՝ ոչ։ Պ. տեսուչը բարեկենդանը կը կատարի, Զատիկը կանցկացնի և երբ կը գան ամառվայ չոք օրերը, երբ հնար չի լինի մնալ քաղաքում, այն ժամանակ, պ. տեսուչը, փոխանակ Նախիջևան գնալու, ամենայն բաւականութեամբ կը ճանապարհորդի իր պաշտօնով այն կողմերը, ուր ջուրը սառն է, օդն առողջարար և բնութիւնը աքանչելի իր գեղեցիկ պատկերներով։ Մինչև այժմ պարոնը ոչ մի տեղ չէ գնացել և այնուհետև աւելորդ է գնալը, քանի որ անձրևից, ձիւնից, քամուց կարելի է միայն պատսպարվել տաք սենեակում։ Իսկ այստեղ ինչ հարկաւոր է զանազան չոր ու ցամաք ծրագրեր կազմելու վրա զուրս պատռել։

***

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

14 մարտի

Գանձակում հացի թանգութիւնը չարժեց ունևոր դասի սիրտը, և մտածել տուեց նրան որ ժամանակ չէ քսակի բերանը փակելու, պէտք է անշուշտ օգնութիւն հասցնել աղքատ դասին։ Ահա այս նպատակով քաղաքիս Մկրտումի անուանեալ քուչի (փողոցի) ժողովուրդը, ամսի 12-ին երեկոյեան ժողովեցին Պ. Յակովբ Լիսիկեանցի տանը։ Նոքա իրենց փողոցի աղքատները բաժանեցին երկու դասակարգի — բոլորովին աղքատ և կիսաղքատ. առաջին տեսակը պէտք է բոլորովին ձրիաբար ստանայ հացը, իսկ երկրորդ տեսակը ալիւրի գնի արժողութիւնից պուդին մի բուբլի պակասով կը գնէ ալիւրը. առաջինների թիւը հասաւ 40 հոգու, իսկ երկրորդի 34 հոգու։ Սորանց երեք ամիս պահելու համար պէտք եկաւ վեց հարիւր բուբլ։

Նոյն փողոցի ունևոր դասն էլ բաժանվեց երեք դասակարգի՝ 1-ն 25 ր., 2-դ 15 ր. 3-դ 10 ր., որոնք միանուագ վճարելով այս տուրքը, վերոյիշեալ աղքատների դրութիւնը հացի կողմից բարւոքում են երեք ամիս ժամանակով։ Այսպէս ցուցակագրելուց յետոյ ընտրվեցին երեք հոգի, որոնց պարտքն է ժողովել տուրքը, գնել ալիւր և ցուցակագրված աղքատներին ամսական վճռված ալիւրը բաժանել։ Նուէրքների մեծ մասը արդէն ժողովված են, ասում են, որ միւս քուչաներն էլ հետևում են սորանց բարի օրինակին. ախ, ինչ կը լինէր, որ լսածներս իրագործվէր, և մեր արիւնակից եղբարք գոնէ դատարկ հացի կողմից ապահովվէին։

Ձիւնը և ցուրտը Գանձակում դեռ ևս չարունակվում է. ձմեռվայ սաստկութիւնը և երկարութիւնը մի կողմից, կենդանիների կերակուր չունենալը միւս կողմից կոտորում է բոլոր կենդանիներին. դաշտերում, ինչպէս ասում են, սատկած կենդանիների մարմիններ են ընկած. ինչ կը լինի գարնանը մեր դրութիւնը, չը դիտեմ. ասում են այնպիսի հովիւներ կան, որոնց ոչխարները և գառները մի գիշերվայ մէջ կոտորվել են ցրտից և իրանք դատարկ գնացել են իրանց տները։

Այստեղ մեծ քանակութեամբ մորեխի սերմն են բերում, ոսոխականութիւնը առնում է փունտը 40 կոպէկով. ասում են ցայժմ բերած յանձնած են մինչև 30 պուդ։

Այստեղ ծախվում է ալիւրի պուդը 4 ր., խոտը 1 ր. 80 կ., կարտոֆէլի պուդը 2 ր., դարմանի 1 ր. 40 կ., ածուխի բեռը, որ կը լինի հազիւ 2 պուդ, արժէ 4 բուբլ։

Այստեղ լուր է տարածվել, որ գիւղացիք պարտաւոր են գնալ Թիֆլիս և ստանալ արքունական շտեմարանից իրենց հասանելի ցորենը։

Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շամախի, 11 մարտի

Կարդալով ձեր ազգօգուտ լրագրի 19-որդ համարում մի սրտաշարժ նամակ Ցաճկաստանից, որի մէջ նկարագրված էր Վասպուրականի մեր ազգայնոց աղէտալի վիճակը և թէ ինչպէս Վանայ մեր ազգայինք տանջվում են սովի անխնայ հարվածից, Շամախու Հայ-Աւետարանական ընկերութիւնը, մարտի 9-ին, կիրակի օրը, պաշտամունքից յետ սկսեց ստորագրութիւն բաց անել Վանայ սովատանջների համար, որով և գոյացաւ հարիւր տասն և հինգ բուբլի, որ ներփակեալ այս նամակով ուղարկում եմ ձեզ, որ դուք հասցնէք Շամախու Հայ-Աւետարանականաց աղքատիկ լուման մեր Տաճկահպատակ ազգայնոց։ Նոյն ընկերութեան յանձնարարութեան համեմատ չեմ ուղարկում նուիրատուաց ցուցակը։

Սարգիս Համբարձումեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 17-ն մարտի

Կարդալով լրագիրներ և տեղեկանալով Վասպուրականի թշուառ դրութիւնը, չը կարողացայ անտարբեր մնալ դէպի սովալլուկ մեր եղբայրները, ուստի պարտաւոր համարեցի ինձ, իբրև հայ մարդ, փոքր ինչ օգնել իմ թշուառ եղբայրներիս և քոյրերիս և քանի մի օրվայ ընթացքում կարողացայ իմ բարեկամներից և ծանօթներից ժողովել 20 բուբլ, ուստի խնդրում եմ որ այս չընչին գումարը հասցնէք ուր հարկն է և նուիրատուների անունները տպագրէք ձեր պատուական թերթի մէջ։

Յակովբ Յակովբեանց 2 ր., Գրիգոր Զախարեան Խարազեանց 1 ր., Յովհաննէս (Վանս) Նունեանց 1 ր., Մարտիրոս Ղամազեանց 1 ր., Յովսէփ Ամիրշահեանց 1 ր., Յակովբ Յակովբեանց (քաթան ծախողներից ժողոված) 6 ր., Արտէմ Սպարապետեանց 50 կ., Վաղարշակ Բելլուբեգեանց 50 կ., Արտէմ Յարութիւնեանց 50 կ., Դարչոյ Օսկանեանց 20 կ., Յակովբ Սիմոնեանց 20 կ., Տիկին Թագուհի Ծովիանեան 1 ր., Կատարինէ Մնացականեան 1 ր., Եփեմիա Խարազեան 1 ր., Կոյս Շուշանիկ Խարազեան 1 ր., Սալոմէ Հայրապետեան 50 կ., Բարբարէ Բեգլարեան 50 կ., Մայեայ Բեգլարեան 50 կ., Կէկէլ Ռոստոմեան 50 կ., Հայ ոմն 10 կ.։ Գումարն է 20 բուբլ։

Մարտիրոս Ղամազեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Կամենսկայա Ստանիցա, 27 փետր.

Տեղս գտնված մի խումբ նոր-Նախիջևանցի հայերի տեղեկանալով «Մշակի» համարներից Վանայ սովատանջների սրտակտուր դրութեան մասին, բանալով ստորագրութիւն, հաւաքեցին 121 բուբլ, որը ուղարկելով ձեզ, խնդրում եմ խմբագրութեանդ յիշեալ գումարն ըստ պատկանելոյն հասուցանելով, նաև բարեհաճէք նուիրատուների ազգանունները տպել «Մշակի» համարներից մէկի մէջ։ Կարապետ Խոնկուռեան 10 ր., Աւետիք Խոնկուռեան 5 ր., Սարգիս Ղազարոսեան 10 ր., Մանուկ Ղազարոսեան 3 ր., Աւետիք Խազիզեան 10 ր., Գրիգոր Խազիզեան 5 ր., Յովհաննէս Պոստանջեան 10 ր., Կասպար Աղդարեան 7 ր., Սիմէօն Մուռթեան 5 ր., Գրիգոր Մաթոսեան 5 ր., Միքայէլ Խամաղժիեան 5 ր., Միքայէլ Զոռչոփեան 3 ր., Սահակ Զերքէսեան 3 ր., Սիմէօն Աչաքովսկի 3 ր., Սիմէօն Այվազեան 3 ր., Մարտիրոս Ցօնիկեան 3 ր., Յարութիւն Կամացեան 2 ր., Համբարձում Զերիքչեան 1 ր., Գաբրիէլ Մաթոսեան 1 ր., Մեհրաբ Ստեփանեան (պարսկաստանցի) 1 ր., Մահտեսի Ռուստամ Զաքարեան (պարսկաստանցի) 1 ր., Գրիգոր Թեքիճիեան 1 ր., Դանիէլ Ճալաղայեան 50 կ., Պասիս Աղդարեան 1 ր.։ Տիկին՝ Նուրբեկէ Խոնկուռեան 3 ր., Խսկուհի Խազիզեան 3., Մարիամ Խազիզեան 3 ր., Մարիամ Ղազարոսեան 3 ր., Սրբուհի Պոստանճիեան 3 ր., Հռիփսիմէ Խամաղժիեան 3 ր., և չորս ռուս պարոններն 4 ր. 50 կ., ընդամենը 121 բուբլ։ Սոցա մէջ կարող չեմ չը յիշել Սարգիս Ղազարոսեանին, և չը յայտնել նրան շնորհակալութիւն նրա կրած աշխատանքի համար ստորագրութեան ժամանակ։

Կարապետ Խոնկուռեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք յօգուտ Վանի սովելոց Թիֆլիսաբնակ վաճառական պ. Միքայէլ Նիկողոսեան Տէր-Նիկողոսեանցից 15 բուբլ և նոյն նպատակով 15 բուբլ տիկին Եղիսաբէթ Տէր-Նիկողոսեանցից։

—

Ստեփաննոս քահանայ Տէր-Ստեփաննոսեանց ուղարկել է մեզ ԼԷՆԿՕՐԱՆԻՑ 100 բուբլ յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների, որ տէր-հայրը ստորագրութեամբ է հաւաքել։ Նուիրատու անձանց ցուցակը մեզ դեռ ևս ուղարկված չէ։ Ստորագրութիւնը շարունակվում է։

—

Ստացանք յօգուտ Վանի սովելոց Թիֆլիսում բնակվող տիկին Նատալիա Խանդամիրեանցից 3 ր., օրիորդ Աննա Խանդամիրեանցից 1 ր., և պ. Ա. Վարդապետեանից 3 ր.։ Ընդամենը 7 բուբլ։

—

Դարձեալ ստացանք պ. Յովհաննէս Թիւրքեանից ՓՕԹԻՑ 100 բուբլ յօգուտ Վանի սովելոց։ Ստորագրութիւնը շարունակվում է։

—

ԻԴԴԻՐԻՑ պ. Սմբատ Աւագեանից ստացանք 5 բուբլ յօգուտ Վանի սովատանջների։

—

Արշակ քահանայ Տէր-Ստեփանեան ուղարկել է մեզ 117 բուբլ յօգուտ Վանի սովատանջների, որ ստորագրութեամբ է հաւաքել ՍՂՆԱԽ քաղաքում։ Նուիրատուների ցուցակը դեռ չենք ստացել։ Ստորագրութիւնը շարունակվում է։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքի հայ դպրոցների մի քահանայ-ուսուցիչ ամենաչնչին առիթով անխնայ ծեծում է աշակերտներին և աշակերտուհիներին։ Նորերումս պատուելի տէր-հայրը բռնեց մայրերից մի տաս տարեկան աշակերտուհուն, որ իր դասը չէր պատրաստել, և մի քանի անգամ գլուխը նստարանին զարնելով, սկսեց քաշքշել իր ողորմելի զոհին պատից պատ։ Օրիորդի գլուխը սաստիկ ուռած է և բժշկները հաստատում են թէ խեղճի ուղեղը մեծ հարուած է ստացել։ Առաջին անգամ չէ, գրում է մեզ մեր թղթակիցը, որ յիշեալ քահանան այսպէս վարվում է մանուկների հետ։ Շատերը նրա ձեռքից հիւանդացան, իսկ անցեալ տարի մի աշակերտ վախճանվեցաւ տէր-հօր ուղղիչ և դաստիարակիչ մեթոդին ենթարկվելով։

—

Արդէն 15 օր էր որ Ռուսաստանի փօստը ստացված չէր մեզանում։ Երկու շաբաթ է, ուրեմն, որ Թիֆլիսցիներս, բացի մեր տեղական լրագիրներից ուրիշ ոչ մի լրագիր չէինք կարդում։ Երէկ, վերջապէս, մարտի 21-ին ստացվեցաւ փօստը։

—

Վերջապէս եղանակը մեղմացաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Օդը բոլորովին գարնանային է դարձել։

—

Այն լուրը ստուգվում է որ Ս. Էջմիածինը ուղարկել է բոլոր եկեղեցիներին ժապաւէնեալ մատեաններ, որպէս զի քահանաները ամեն տեղ ստորագրութիւն բանան յօգուտ Վանի սովեալների։ Բայց ո՞ւմ կը յանձնվեն ժողոված փողերը, —յայտնի չէ։

—

Ընթերցողի ուշադրութիւնը դարձնում ենք մի երէկվայ համարի մէջ տպված Ախալցխայից ստացած հեռագրի վրա։ Այդ հեռագիրը մեզ տեղեկացնում է որ կաթոլիկ հայերի հոգևոր իշխանութիւնը հրամայել է իր եկեղեցիներին ժողովել փողեր յօգուտ Վանի սովեալների և այդ ժողոված փողերը յանձնել «Մշակի» խմբագրութեանը։

—

Յօգուտ Վանի սովատանջների ստացանք 7 բուբլ պարսկաստանցի Մկրտիչ Միհրանեանից։

—

Կիրակի օր, մարտի 23-ին յայտնի ձեռնածու պ. Կոզլով տալու է Արծրունու թատրոնում մի ներկայացումն յօգուտ ԹԻՖԼԻՍԻ հիւանդանոցի կենդանիների համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Պարսկաստանից ստացած վերջին նամակներից տեղեկանում ենք.

Ատրպատական նահանգի համարեա բոլոր գաւառներում այժմ տիրում է հացի սաստիկ թանգութիւն, որ մի քանի տեղերում սովի կերպարանք է ստացել: Ժողովուրդը չը գտնելով մի ուրիշ բան ուտելու, կերակրվում է աղացած ոսկորներով, բամբակի հունդերով կամ բոյսերի արմատներով, որոնք քաղցը չը յագեցնելէն յետոյ, պատճառում են զանազան տեսակ հիւանդութիւններ: Սալմաստի գաւառում արդէն յայտնվել է քաղցածութիւնից առաջ եկած հարինք (голодный тифъ): Նոյն գիւղերում կարելի է տեսնել, փողոցների վրա ընկած, զանազան հասակի և սեռի մարդիկ, որոնց բերանից հոսում է մի տեսակ կանաչագոյն լորձունք, որ դուրս է ժայթքում նա իր կերած ամեն տեսակ խոտաբոյսերից:

Սովը մի քանի տեղերում կատաղի խելագարութեան է հասցրել ժողովրդին, որոնք այլ ևս ուշադրութիւն չեն դարձնում ոչ կարգի, ոչ օրէնքի և ոչ էլ ոստիկանութեան վրա,—այլ բազմութեամբ յարձակվում են և յափշտակում են ամբարները, որտեղ իմանում են թէ հաց կայ: Ուրմիա քաղաքում, իսկ վերջին օրերս Թաբրիզ քաղաքում կատարվեցաւ մի քանի այսպիսի յափշտակութիւններ, և ոստիկանութեան ու կառավարութեան զինուորների միջամտութիւնը անկարող եղան զսպել կատաղի ամբոխին. տեղի ունեցան մինչև անգամ սպանութիւններ: Այժմ ամեն մարդ գտնվում է մի ընդհանուր սարսափի մէջ, թէ հաց ունեցողը և թէ չունեցողը: Աղքատը ոչինչ չունի ուտելու, իսկ հարուստը ամեն րոպէ սպասում է, թէ ահա մի խումբ սովալլուկներ ներս կը թափվեն նրա տանը և կը յափշտակեն նրա երեխաների հացը:

Սովի պատճառով զանազան տեղերում կատարվեցան զարհուրելի դէպքեր: Ուրմիայում մի պարսիկ կին կերել էր իր ձեռքի մի մատը. այս քաղաքում երկու քրիստոնեայ աղջիկներ վաճառվեցան սուլդուզցի Թուրքերին մի բեռ ցորենով: Իսկ սովից մեռնողների թիւը հաշիւ չունի: Ամեն տեղ կարելի է տեսնել ծնողներին, որ իրանց զաւակների ձեռքից բռնած, դիմում են այս և այն հարստին, ասելով, թէ «վեր առէք, ձեզ ենք տալիս, միայն հաց տուեցէք և պահեցէք»: Բայց անասունը այժմ որ և իցէ արժէք ունի, իսկ մարդը ոչինչ արժէք չունի, որովհետև նրան պէտք է կերակրել:

Կառավարութիւնը ամեն հնարքներ գործ է դնում, որ սովի սաստկութիւնը թեթևացնէ. նա ամեն տեղ ուղարկել է իր զորձակատարներին, որ խստութեամբ հսկեն, որպէս զի ամբարներում հաց չը պահվի աւելի թանգացնելու մտքով. և եթէ յայտնվում են այսպիսիները, անխնայ պատժվում են և մեծ տուգանքի են ենթարկվում: Աւելի եռանդով գործում են բողոքական և կաթոլիկ միսիոնարները: Սովը մի յաջող առիթ է նրանց համար տեղական զանազան ազգութիւններին և զանազան կրօններին պատկանող ժողովրդի համակրութիւնը գրաւելու համար, և այս պատճառով ամեն կերպով օգնում են: Ուրմիա քաղաքի ամերիկացի միսիոնարները ամեն օր մի քանի հարիւր հոգի կերակրում են, առանց խարութիւն դնելու կրօնի և ազգութեան, և թէ Եւրոպան և թէ Ամերիկան ողողել են իրանց նամակներով, որ Պարսկաստանի սովելոց համար նպաստներ հաւաքվին: Ոչ սակաւ աշխատում է այդ մասին և Թաւրիզի անգլիական կոնսուլը:

Ատրպատականը, Պարսկաստանի այդ ամենաբարեբեր նահանգը, անհաւատալի էր, որ կենթարկվի սովի: Երկու դժբախտ տարիներ յաջորդեցին միմեանց. 1877 թուականին այն աստիճան յորդ և անընդհատ անձրևներ եկան ամեն տեղ, որ բոլորովին փոտեցրին և ոչնչացրին հունձքի արտերը, իսկ 1879 թուականի ամբողջ տարին անցաւ մի չը տեսնված երաշտութիւնով, որ չորացրեց ամեն տեսակ բուսականութիւն:

Այս և այն գաւառներում սովի աւելի սաստկանալն նպաստում է այն հանգամանքը, որ իւրաքանչիւր գաւառ արգելում է իր միջից ցորեան դուրս տանել հարևան գաւառը, կարծես, ամեն մէկը առանձին պետութիւն լինէր: Եւ կառավարութիւնը պէտք է գլխաւորապէս այդ բանի վրա ուշադրութիւն դարձնէ: Ֆէօդալական հին սիստեման, որի հետքերը տակաւին մնացել են Պարսկաստանում, առանձնացրել են գաւառները միմեանցից, և այժմ ամեն մի գաւառ աշխատում է, որ իր միջից որ և իցէ պաշարի արտահանութիւն չը լինի, որպէս զի թանգութիւնը իր մօտ չը սաստկանայ:

Մի քանի գաւառներում ժողովուրդը իր քաղցը յագեցնում է չոր մրգեղէններով, գլխաւորապէս քիշմիշով. ոչ սակաւ նպաստում են սովելաներին կարտոֆելը, ճակնդեղը և գէղարը: Բրինձը այս տարի նոյնքան սակաւ է, որքան ցորեանը: Հացթուխների մօտ հաց չէ գտնվում, որովհետև հացթուխները վախենում են բազարում հաց դուրս բերել մտածելով որ իսկոյն սովելաները վրա կը թափվեն և կը յափշտակեն: Հացը թխում են տներում և ծածուկ վաճառում են ծանօթներին միայն:

Աւելի սարսափելի դրութեան մէջ են Սալմաստ գաւառում Թուրքաց Հայաստանի Աղբակ գաւառից այնտեղ գաղթած հայերը: Այդ թշուառների թիւը հասնում է 300 ընտանիքի, որոնք կիսամերկ, աղքատ և կոզոպված, լեցրել են տեղային հայերի գիւղերը, և դրնից դուռ ընկած, մուրացկանութիւն են անում: Աղբակայ հայերը միանգամ ևս ռուս-թուրքական վերջին պատերազմի ժամանակ, չը կարողանալով համբերել քրդերի բարբարոսութիւններին, 500 ընտանիքով գաղթեցին Սալմաստ, բայց պատերազմը վերջանալուց յետոյ կրկին վերադարձան իրանց հայրենիքը: Քրդերը դարձեալ նրանց հանգստութիւն չը տուեցին, որ կարողանան ցանք անել և իրանց համար պաշար պատրաստել: Շէյխ-Իբրահիմ անունով մոլեռանդ կրօնաւորը, հաւաքելով իր ձեռքի տակ քրդերի Հաքարի կոչված արիւնարբու ցեղը, սկսեց ասպատակել Աղբակից սկսեալ մինչև Վան գլխաւորապէս հայերի գիւղօրայքը: Այդ արշաւանքը տեղի ունեցաւ 79 թուականի աշունքին և տևեց մինչև նոյն տարվայ վերջին ամիսները, և իր ժամանակի հրատարակութիւնների մէջ բաւական աղմուկ բարձրացրուց: Վերջը պարզապէս յայտնվեցաւ, որ Շէյխի ասպատակութիւնները կատարվել էին տաճկաց կառավարութեան գաղտնի թելադրութեամբ, տեղային հայերին ոչնչացնելու նպատակով, թէև ինքը կառավարութիւնը առ երես ցոյցեր էր անում, իբր թէ աշխատում է զսպել չարագործին: Այդ միջոցին Աղբակայ հայերը կրկին ստիպվեցան Տաճկաստանից գաղթել պարսից սահմանակից Սալմաստ գաւառը:

Սալմաստում աղբակեցի գաղթականների վիճակը բոլորովին անտանելի է դարձել: Տեղային հայերը որքան էլ ցանկանան օգնել նրանց և պահպանել նրանց կեանքը սովամահ լինելուց, հազիւ թէ կարող են, որովհետև իրանք էլ աղքատ են և իրանք էլ ուտելու հաց չեն գտնում: Ցորենի մի բեռը (10 պուդ) արժէ այժմեան կուրսերով մօտ 50 րուբլի. դա մի այնպիսի սարսափելի դէպ է, որ երբէք չէ տեսնվել Ատրպատականում, ուր ժողովուրդը սովոր էր գնել մի բեռ ցորեանը միշտ 3—4 րուբլիով: Այս կողմերում մի գիւղացի ընտանիք ամբողջ տարվայ ընթացքում հազիւ 50 րուբլի վաստակ ունի. այժմ այդ գումարով պիտի գնէ նա մի բեռ ցորեան միայն, որ նրա գերդաստանի մի երկու շաբաթվայ պաշարը կարող է լինել. բայց ինչով լցուցանէ նա իր միւս պէտքերը:

Տեղային հայերը մի կերպով կարողանում են ապրել. ինչ որ տուն ու տեղ ունեն, կայք ունեն, վաճառում են և տալիս են հացի: Բայց ինչով կարող է ապրել այստեղ եկած աղբակեցի գաղթականը, որոնց թիւը, որպէս վերևում յիշեցինք, 300 ընտանիքից աւել է: Այդ ողորմելիները փախել են Տաճկաստանից առանց իրանց հետ մի բան բերելու, բոլորովին աղքատացած և կողոպտված քրդերից, և կերակրվում են Սալմաստում մուրացկանութիւնով, որը մեծ դժուարութեամբ է յաջողվում նրանց:

Վանից վերջին օրերումս ստացված ռուսաց հիւպատոսի հեռագիրը հաղորդեց բուն Աղբակի մէջ մնացած հայերի սարսափելի դրութիւնը, ուր 150 հոգի սովից մեռած են գիւղերի փողոցների մէջ: Եւ Սալմաստ փախած աղբակեցի գաղթականները նոյն վիճակին կենթարկվին, եթէ նրանց անմիջապէս օգնութիւն չը հասնի, մի կողմից սովը, միւս կողմից սովից առաջացած տիֆը անխնայ կոտորում է նրանց: Մերկ, քաղցած և անօթևան, այժմեան սաստիկ ցրտերի ժամանակ, նրանք պատսպարվելու տեղ անգամ չունեն, բնակվում են հայ գիւղացիների ախոռատներում նրանց անասունների հետ:

Եթէ ցանկութիւն չունենք, որ Աղբակայ նման, տաճկաց սահմանի վրա դրված, մի հայաբնակ գաւառ բոլորովին դատարկվի հայերից, պէտք է օգնել, և անյապաղ օգնել յիշեալ գաղթականներին,—և այդ թշուառների վրա ենք դարձնում, թէ Կ. Պոլսի սովելոց մասնաժողովի և թէ մեր ռուսաց հայերի դթութիւնը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ առաջնորդող յօդուածը:

Շանխայից ստացված հեռագիրը մեզ տեղեկացրեց, որ Չինաստանի և Եապոնիայի մէջ Լիու-Կիու կղզիների վերաբերութեամբ եղած վէճի առիթով չինական կառավարութիւնը կընդունի օտարի միջնորդութիւն: Այդ լուրը Ռուսաստանի ուշադրութեան արժանի է:

Օտար ազդեցութիւնը, որի միջոցով կամենում են դադարեցնել Չինաստանի և Եապոնիայի վէճը, Պեկինում խոր արմատներ է գցում: Ս. Պետերբուրգի չինական նախկին դեսպան Զօնկսուսի դատը, որը այդ դեսպանին մահուան պատժի ենթարկեց, նոյն օտար ազդեցութեան հետևանք է:

Պեկինի կառավարութիւնը վաղուց ցանկանում էր իր հաշիւները վերջացնել Եապոնիայի հետ, բայց մինչև այժմ չէր կարողանում վճռողական քայլ անել, որովհետև դեռ չէ հաստատել իր հեղինակութիւնը Միջին-Ասիայի նոր նուաճած երկիրներում: Մի և նոյն ժամանակ նա չէ կարող անբաւականութիւն ունենալ Ռուսաստանի հետ Կուլջայի հարցի առիթով, մինչև իր հաշիւները Եապոնիայի հետ չը վերջացնի: Ցայտնի է, որ չինական կառավարութիւնը վճռեց բարեկամական յարաբերութիւններ հաստատել Ռուսաստանի հետ, ամրացնել այդ բարեկամութիւնը նոր դաշնագրով, որին նա մեծ նշանակութիւն էր տալիս, որովհետև այդ դաշնագրի վերաբերութեամբ հարկաւոր եղած բանակցութիւնների վարելը յանձնեց իր ամենանշանաւոր պաշտօնեաներից մէկին: Օտար ազդեցութիւնը երևի շատ մեծ էր, որ նա ստիպեց բնութենից յամառ չինացիներին փոփոխել իրանց քաղաքական նախկին պրոգրամը: Բայց մենք տեսնում ենք, որ Պեկինի կառավարութիւնը փոխում է այդ պրոգրամը, մերժելով Ալիվադիայում ստորագրված դաշնագիրը: Այժմ Չինաստանը կամենում է առաջ Եապոնիայի հետ համաձայնութիւն կայացնել:

Գործերի այսպիսի դրութիւնը պէտք է ըստիպէ մեզ նախազգուշանալ: Մենք պէտք է աշխատենք ազդել եապոնական կառավարութեան վրա, որ կարողանանք ընդդիմանալ օտար այն ազդեցութեանը, որ տիրապետում է Պեկինի մէջ: Մի քանի նշաններից երևում է, որ եապոնական կառավարութիւնը ցանկանում է բարեկամ լինել Ռուսաստանի հետ: Եապոնիան Ռուսաստանի բարեկամութիւնը աւելի լաւ կը համարի, քան թէ Չինաստանի տուած օգուտները, որովհետև այդ օգուտների ամենամեծը այնուամենայնիւ սահման կը դնի Եապոնիայի ձգտումներին Մեծ-Ովկիանոսի մէջ, մինչդեռ Ռուսաստանի հետ կապած դաշնակցութիւնը կօգնի նրան իրագործել իր թշնամական դիտաւորութիւնները Չինաստանի վերաբերութեամբ:

Քանի որ գործերը այս դրութեան մէջ են, Ռուսաստանը ասիական արևելքում պէտք է անպատճառ ունենայ մի այնպիսի քաղաքական հաւատարմատար, որ լաւ ծանօթ լինի չինական և եապոնական գործերի հետ:

Չինական կառավարութիւնը հրաժարվեց հաստատել Ռուսաստանի հետ կապած դաշնագիրը, քանի որ այդ դաշնագիրը ստորագրված էր իր դեսպանից, որ ընդարձակ հաւատարմագրեր ունէր իր կառավարութիւնից: Այդ վարմունքը միջազգային նշանակութիւն ունի: Իսկապէս այդ գործը պէտք է քննվէր եւրոպական այն բոլոր պետութիւններից, որոնք դաշնագիրներ ունեն կապած Չինաստանի հետ: Եթէ չինական կառավարութիւնը արհամարհեց Ռուսաստանի հետ կապած դաշնագիրը, նոյնը նա կարող է անել և միւս պետութիւնների հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի: «Правит. Вѣстн.» հաղորդում է մի բիւլետեն Կայսրուհու առողջութեան մասին մարտի 12-ից մինչև 18-ը: Կայսրուհու առողջութեան վատանալը անցեալ շաբաթվայ ընթացքում շարունակվում էր: Սրտի բաբախումը հիւանդութեան ծանր նշաններից մէկն էր: Հիւանդութեան նախկին նշաններին աւելացել են քնելու ցանկութիւնը և այժերի թուլանալը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի: «Русскій Инвалидъ» լրագիրը հաղորդում է, որ 1877 թուականի Զեյնի և Դաղեստանի ապստամբութիւնը նուաճելու համար Թագաւոր Կայսրը շնորհում է Ապշերոնի գունդի առաջին բատալիոնին Գէորգեան արծաթեայ փող, նոյն գունդի 5,6,7 բոռաներին գլխի զարդեր, նոյն գունդի 3-դ բատալիոնին Գէորգեան դրօշակ, Սամուրեան գունդի 2-դ բատալիոնին Գէորգեան դրօշակ: Կովկասեան զօրքերի Գլխաւոր Հրամանատարի կարգադրութեան տակ եղած գնդապետ Պետրուսևիչին զիներալ-մայորի աստիճան է շնորհված և նա նշանակված է Անդրկասպեան զինուորական բաժնի գլխաւոր, զիներալ-մայոր Լոմակինի տեղ, որ 5 ամսով արձակված է արտասահման բժշկվելու համար:

ԼՕՆԴՕՆ, 20 մարտի (1 ապրիլի): Պարլամենտական ընտրութիւնները սկսվեցան:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում մի գրքոյկ՝ պ. Ա. Քիշմիշեանցի—«ԳՈՇՆ» և ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋԸ» վէպերով: Գրքոյկի գինն է՝ երեսուն կոպ.: Բոլոր արդիւնքը յատկացրած է յօգուտ ՎԱՆԱՅ ՍՈՎԵԼՈՑ:

3—4

Въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства въ Тифлисѣ имѣется для продажи яички шелковичныхъ червей французской породы, воспитанныя Барономъ Бахомъ, въ окрестностяхъ Тифлиса, по 35 коп. за золотникъ.

Иногородныя обращаются съ требованіями въ Общество съ препровожденіемъ слѣдуемыхъ денегъ, почтовыя расходы на счетъ Общества.

3—3

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՒՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ"

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է՝ ԳԻՒՄՐՈՒՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մըշակի» խմբագրատանը Յ. ՄԻՆԼԻՔ-ՅԱԿՈՐԵՄՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բոկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

4—10

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Յ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Դոկտոր Բոկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Ֆրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. -- 30 կ.:
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Դամառ-Ռաթիպայ — մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Նոյնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիո Փէլիքոի Ֆրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօնարդիի առ Խտալիան. Տարօնոյ ծերը: Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.:

6—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդկովսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւաւոտեան 0 բրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ОТЪ РАСПОРЯДИТЕЛЬНАГО КОМИТЕТА

Тифлисскаго Благотворительнаго ОБЩЕСТВА

Объявляется, что копѣечный сборъ будутъ производить въ текущемъ великомъ посту по городскимъ участкамъ: въ 1-мъ А. Е. Фролова, во 2-мъ княгиня Е. А. Гагарина и А. И. Руманская, въ 3-мъ О. А. Томичъ и Е. Н. Иванова. въ 4-мъ В. Я. Опочинина (участокъ бывшій княгини С. Я. Святополкъ-Мирской), въ 5-мъ княгиня М. Г. Меликова, въ 6 и 8-мъ княгиня В. Г. Баратова, въ 7-мъ С. П. Красноглядова и О. Н. Чукмасова, въ 6-мъ княгиня О. Д. Барятинская, въ 10-мъ Фон-деръ-Нонне.

Дамы, принявшія на себя трудъ копѣечнаго сбора, будутъ ходить въ сопровожденіи околодочныхъ надзирателей.

На кружкахъ имѣются печатныя надписи на русскомъ, грузинскомъ и армянскомъ языкахъ.

(131) 2—2.

Վաճառվում է նոր հրատարակված «Ցիսնաղի Տաւիղ Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատունեանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց: Դիֆտերիտ բողազացաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Գ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ.)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ.

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

8—8

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է թէ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և թէ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Մատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունւոյ: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

3—5

Ընանովի քարվանսարան այրվելուց յետո, նորից բացված է իստակ մոմի առևտուր Սիօնեան փողոցում Արծրունու քարվանսարայումը № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած իստակ մոմեր իմ սեփական գործից և որոնք վաճառվում են էժան գներով. խնդրեմ գնողներին չը թողնել իրենց այցելութիւնները:

Յովհաննէս Կուրծեան

4—4

Տպագրութեան համար պատրաստ են՝ «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկօլն» ստրուկներին ազատող Վիլհելմ Հոֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մոլիէրի հետ «Ծարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նոտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹՒԻԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէկսէյներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, ես անուավեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Փետրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ Իվան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՑԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվեն ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. կօնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ վկայական ունի և գիտէ ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻԵՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները, դասեր է տալիս: Հասցէն Կամենդանտսկայա փողոց, տուն Շախմուրադովի № 23:

1—4 (2)

Дозволено Цензурою 21 Марта 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона